

ՆԵՎՐԱԲԱՆԱԿԱՆ Տ Ե Ր Մ Ի Ն Ն Ե Ր

ԿԱԶՄԵՑ ԴՈՑԵՆՏ Գ. ԳՐՈ

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1936

616.8

Գ. - 92

27.03.2013

30 JUL 2010

616.8
7-92



116

731 307

1010
42388

Ն Ե Վ Ր Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ր Մ Ի Ն Ն Ե Ր

(ՀԱՎԵԼՎԱԾ ՊՐՈՖ. Մ. Ի. ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐՈՎԻ
„ՆԵՐՎԱՑԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ“ ԴԱՍԱԳՐՔԻ
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ)

Կազմեց դոցենտ Գ. ԳՐՈ

ԽՈՐՀՐԳՍՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ 1936



Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ներկա բառարանը կազմելու և հրատարակութեան հանձնելու հիմնական նպատակն այս է յեղել. տալ մեր ուսանողներին և ընթերցողներին մի այնպիսի ոժանդակ բառագիրք, վորը կարելոյն չափ հեշտացնի հատկապես նեվրաբանական գրականութեան ուսումնասիրումը: Այդպիսի բառարան հրատարակելու անհրաժեշտութիւնը նմանապես քղլուծմ եր և պրոֆ. Աստվածատուրովի «Ներվային հիվանդութիւնների դասագիրք» խորագիրը կրող աշխատութեան հայերէն թարգմանութեան հրատարակումից: Այդ գրքի առջաբանում, վորը գրել ենք մենք վորպես թարգմանիչ և խմբագիր, ասել ենք. «Հայ բժշկական գիտական լեզվի դեռ վոչ բավականաչափ մշակված լինելը, հայերէն բժշկական տերմինների պակասը, յեղածների վիճելիութիւնն ու անորոշութիւնը մեծապես դժվարացնում էյին մեր գործը»: Յեվ յեթե մենք խոշոր դժվարութիւնների էյինք հանդիպում դասագրքի թարգմանութեան ժամանակ, ապա այդ դժվարութիւնները, բնականաբար, պետք է կրկնապատկէյին բառարան կազմելիս, մի բառարան, վորը պետք է պարունակի բժշկա-նեվրաբանական գրականութեան մեջ գործածվող գիտական տերմինների ճիշտ և հարազատ թարգմանութիւնը:

Հայ բժշկական գրականութեան մեջ մինչև այժմ յեղած պրոֆ. Վ. Արծրունու և բժիշկ Լ. Տիգրանյանի բառարանները նեվրաբանական տերմիններ համարյա չեն պարունակում: Նեվրաբանական տերմիններ, չկան և բժշկա-տերմինաբանական Հանձնաժողովի կողմից վերջերս լույս ընծայած «Անատոմիական տերմիններ» ապակիտիպ աշխատութեան մեջ: Թե հիշյալ բառարաններում և թե բժշկական պրակտիկայում գործածվող հատուկներ տերմինները մեծ մասամբ

Պատ. 305, Գլափ. լիագոր 1068, Հրատ. 3621, Տիրած 1000

Հանձնված է արտագրութեան 11 փետրվարի 1936 թ.

Ստորագրված է ապագրութեան 5 մարտի 1936 թ.

Պատհրատի տպարան, Յերևան, II Գնունի, № 4

անհաջող են, վորչազի լրելի կերպով չեն արտահայտում ավյալ բառի իտեղական նշանակութունն ու իմաստը:

Ինչպես գիտության այլ ճյուղերում, այնպես և բժշկականության բնագավառում մենք անցյալից հայերեն լեզվով գրեթե վոչ մի ժառանգութուն չենք ստացել: Նախկին ցարական հեռամնաց նահանգներից մեկում, վորը հեծում էր ցարական բռնակալ լծի տակ, ազգային լեզվի, կուլտուրայի և գիտության զարգացման մասին խոսք անգամ չեր կարող լինել. ասենք՝ դրա կարիքն էլ չեր զգացվում, քանի վոր չկար ազգային լեզվով գործող վոչ մի գիտական հիմնարկ, չկար ազգային լեզվով հրատարակվող գիտական գրականութուն ընդհանրապես և բժշկական գիտական գրականութուն մասնավորապես: Մինչխորհրդային Հայաստանում գիտության զարգացման հնարավորություններ չկային և չեյին ել կարող լինել: Միայն Հոկտեմբերյան սոցիալիստական Հեղափոխության հաղթանակի և Հայաստանի խորհրդայնացման շնորհիվ, միայն Լենին-Ստալինյան ազգային քաղաքականության ճիշտ կիրառման շնորհիվ հայ աշխատավորութունը հնարավորութուն օտացավ իր յեղբայրակից հանրապետութունների աշխատավորության հետ ձեռք-ձեռքի աված զարգացնել՝ ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական՝ իսկական գիտութուն: Միայն խորհրդային էլքանության որոք գիտութունը դարձավ լայն աշխատավորական մասսաների սեփականութուն և կարիք-զգացվից այդ գիտութունը դարձնել հանրամատչելի: Հինց գրանից էլ բզխում է մայրենի լեզվով կազմված ձեռնարկների և հասկանալի տերմինների անհրաժեշտութունը: Այդ անհրաժեշտութունն առանձնապես նշեց մեր մեծ և իմաստուն առաջնորդը Հայաստանի 15-ամյակի կապակցությամբ հայ աշխատավորության պատգամավորության հետ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ:

Ձեռնարկելով նեվրաբանական տերմիններ թարգմանությանը, ավելի ճիշտ հայերեն նեվրաբանական նոր տեր-

միններ մշակելու պատասխանատու գործին, մենք բնավ հավակնութուն չենք ունեցել լրելի և անթերի նեվրաբանական տերմինոլոգիա տալ: Մեր նպատակը, ինչպես առացինք, համետ է յեղել, բացի մեր ուսանող յերևտարադուլթյան համար ոժանդակ բառերը կազմելու ցանկութունից, մենք կամեցել ենք նմանապես հում նյութ տալ բժշկա-տերմինաբանական Հանձնաժողովին, վորը հատկապես աշխատում է բժշկական տերմինաբանական բառարան կազմելու պատասխանատու գործի վրա:

Մեր բառարանում համարյա տեղ չեն գտել անատոմիական տերմինները: Այդ մենք արել ենք գիտակցաբար. նախ՝ նկատի ունենալով բժշկա-տերմինաբանական Հանձնաժողովի հրատարակած «Անատոմիական տերմիններ» վերը հիշած բառերը և յերկրորդ՝ չցանկանալով մեծացնել մեր փոքրիկ աշխատության ծավալը:

Բառարանը կազմելիս, մենք ձեռքի տակ դժանդակ նյութեր գրեթե չենք ունեցել: Բժշկական ֆակուլտետի, այժմյան բժշկական ինստիտուտի, գոյության հենց առաջին որից նեվրաբանութունն ավանդվել է ուսեիբեն լեզվով, մի հանգամանք, վորը մեծապես դժվարացրել է մեր գործը: Ձենք ունեցել նեվրաբանական լեզվի վոչ մի արագիցիա և վոչ մի պրակտիկա:

Բառեր կազմելիս մենք ոգտագործել ենք մեր ծանոթութունը հունարեն և լատիներեն լեզուներին, աշխատելով հնարավորության սահմաններում պահպանել բառերի արմատները, սակայն առանց աղավաղելու նրանց իմաստը: Մենք աշխատել ենք նմանապես չընդվել հայ լեզվի վոգուց և բառակազմության կանոններից: Նոր բառեր մշակելիս, մենք ոգտագործել ենք գերթանո-ուսական բժշկական բառարանը (Կ-ր С. А. Санкин и Կ-ր М. В. Триуе «Медико-русский медицинский словарь», под редакц. проф. О. И. Бронштейна), պահպանելով հայ լեզվի առանձնահատկութունները: Բառերից շատերը, անշուշտ, անհարա-

զատ ու խորթ կհնչեն վոմանց ականջին բառի նորության և առարկային անծանոթ լինելու պատճառով: Մյդ և ցույց տալիս մեզ բառակազմութեան և լեզվական նորմուծութիւնները պատմութիւննր: Վորքան հարազատ են հնչում այսոր մեր ականջում «չոգեղարժ», «հեռախոս», «հեռադիր», «ինքնայեռ» և այլ շատ հանրածանոթ և հանրութեան սեփականութիւնն զարձած բառեր: Իսկ յերեկ... վորքան անիմաստ և անհարազատ էջին նրանք թվում: Վորքան անհարազատ է թվում այսոր «գոյ» (бытие) բառը, վորը փոխարինում է մինչև այժմ գործածված «կեցութիւն» բառին: Անկասկած, վորոչ ժամանակ գործածութեան մեջ մնալուց հետո նեվբաբանական այդ նոր տերմիններն էլ գործածական և սովորական կդառնան, ինչպես վերը հիշված բառերը:

Բառերի թարգմանութեան աշխատանքների ընթացքում մենք հաճախ խորհրդակցել ենք բժշկա-տերմինաբանական, Հանձնաժողովի անդամների հետ այս կամ այն տերմինի հայացման շուրջը, ինչպես նաև փոխ ենք առել Հանձնաժողովի կողմից մշակված մի շարք բառեր: Մյդպիսի բառերի կողքին փակագծերի մեջ մենք գրել ենք «Բ-Տ. Հ.»: Մենք խորհրդակցել ենք նաև հայ լեզվին լավածանոթ մի քանի ընկերների հետ և ոգտվել ենք նրանց խորհուրդներին: Մյստեղ առանձնապես պետք է նշենք բժ. Արմենակ Մեղիքյանի ունութիւնը, վորի հետ միասին թարգմանել ենք Մ. Ի. Աստվածատուրովի «Ներվային հիվանդութիւնները զասպիւրք» աշխատութիւննր:

Մեզ ջախջող բոլոր ընկերներին պարտք ենք համարում սրտազին շնորհակալութիւն հայտնել:

1936 թ. հունվար

Գ. ԳՐՈ

Ա Ա

Абазия — անքայլութիւն, քայլելու անկարողութիւն, արագիւս

abasia trepidans — դողդոջուն արագիւս (հիստերիկ պարալիզի սպաղմաստիկ ձևի արտահայտութիւննր)

absence — արսանս, գիտակցութեան կարճատև կորուստ (եպիլեպսիայի թեթև ձևը)

абсцесс — թարախակույտ

абсцесс мозга — ուղեղի թարախակույտ

абсцесс отогенный — ականջածին թարախակույտ

автоматический — ինքնարբերական

автоматически — ինքնարբերաբար

автономная нервная система — ինքնորեն ներվային համակարգութիւն

агрравация — չափազանցում, ագրավացիա

аграмматизм — անքերականութիւն (սխալ կազմած նախադասութիւն)

агеusia, ageusia — անճաշակելիութիւն

агенезия — ագենեզիա, անձնութիւն

агнозия — անիմացութիւն, անճանաչողութիւն

агония — հոգեվարք

агорафобия, аgraphobia — տարածավախութիւն, հրապարակավախութիւն

аграфия — անգրեյրենակություն, անգրեյրություն
 agrypnia, агрипния — անքնություն, տ. asomnia
 адекватный — համարժեք, համահավասար
 adinamia, адинамия — անզորություն
 adiodokinesis — ադիոդոկինեզ (անկանոն, դան-
 դազ շարժումներ ուղեղիկի հիվանդության
 ժամանակ)
 аichmophobia, айхмофобия — սալրալախություն,
 սլխմոֆոբիա, վախ սուր առարկաներից
 акайрия — աներեսություն, մածանություն
 асаmpsia — անծալություն
 акинезия — անշարժունակություն
 аккомодация — հարդարում (բ.տ. Հ.), հարմա-
 րում
 асорia, акория — անկշտություն
 акромегалия — ակրոմեգալիա, ծայրանդամների
 մեծացում, ծայրամեծություն
 акропарестезия — ակրոպարեստեզիա, թյուրըզ-
 գայություն ծայրանդամների հեռավոր մա-
 սերում
 активный — ակտիվ, ներգործական
 аlgesia, алгезия — ցավի զգացում
 алексия — ալեքսիա, անընթեքցունակություն
 алкоголизм — ալկոհոլիզմ, արբեցողություն
 алкоголизм хронический — խրոնիկական ալկոհո-
 լիզմ, խ. արբեցողություն
 алкоголик — արբեցող, ալկոհոլիկ

алкогольный полиневрит — ալկոհոլային բազ-
 մանեվրատապ
 allolalia, аллолалия — ալլախոսություն
 alopecia areata — բունավոր հերթափություն
 альтернирующий паралич — տարակողմնային պա-
 ралич
 амавроз — ամավոռոզ, մթարություն
 амбиопия — տ. диплопия
 амблиопия — ամբլիոպիա, անտեսություն, ան-
 տեսողություն
 amyelia — ամիելիա, վոլոնուղեղի բացակայու-
 թյուն
 амимия — ամիմիա, միմիկայի բացակայություն,
 անդիմաշարժություն
 амиостатический симптомкомплекс — ամիոս-
 տատիկ ախտանիշակոմպլեքս
 амнезия — անհուշություն, անհիշողություն
 — антеградная — առաջադնաց անհուշություն,
 անտեգրադ անհուշ.
 — ретроградная — հետագնաց անհուշություն,
 ուետրոգրադ անհուշ.
 амиотаксия — ամիոտակսիա, մկանի անկանոն
 կծկում
 amyotonia congenita — մկանների բնածին ան-
 լարվածություն
 amyotrophia spinalis progressiva — մկանների
 վոլոնուղեղային պրոգրեսիվ ապաճում

- амфотония — *ամֆոտոնիա*
 apasusia, анакузия — *խլություն*
 аналгезия — *անցավություն*
 анартрия — *անարտասանություն, հնչյուններ արտասանելու ունակության բացակայություն*
 анафилаксия — *անաֆիլաքսիա, ուժեղացած հակազդեցություն որգանիզմի մեջ մուծած վորոշ նյութերին*
 ангионевроз — *անոթանեվրոզ, անոթների նեվրոզ*
 ангионевротический отек — *անոթանեվրոզային այտուց*
 андроман — *առնամոլ*
 андромания — *առնամոլություն*
 anhydrosis, ангидрозис — *անքրտանություն*
 анергия — *անեռանդություն*
 анестезированный — *անզգայացրած*
 анестезировать — *անզգայացնել*
 анестезия — *անզգայություն*
 анизокория — *անիզոկորիա, բիբերի անհավասարություն*
 анод — *անոդ*
 аномалия — *անոմալիա, անկանոնություն*
 аносмия — *անհատառություն*
 анопсия — *անտեսություն, անուսիա*
 anorexia, анорексия — *անախորժակություն*
 anorexia hysterica — *հիստերիական անախորժակություն*
 анофтальмия — *անակնություն*
 антагонизм — *հակամարտություն*

- антагонист — *հակամարտիկ*
 антагонистический — *հակամարտ,*
 антагонистичность — *հակամարտականություն*
 антальгическая контрактура — *հակացավային (անտալգիկ) կծկություն*
 antihysterica — *հակահիստերիական միջոցներ*
 antinevrasthenica — *հականերվասթենիական միջոցներ*
 apoplexia, апоплексия — *կաթվածահարություն, կաթված*
 — *solaris — արևահարություն*
 — *travmatica — տրավմատիկ կաթված*
 апопектик — *կաթվածահար*
 апопектический — *կաթվածական*
 — *удар — ա. апоплексия*
 апопектиформный — *կաթվածանման*
 апраксия — *անդորժոնություն*
 arce de cerle — *ա. опистотонус*
 арефлексия — *անռեֆլեկսություն, ռեֆլեկսների վերացում*
 арифмоман — *թվամոլ*
 арифмомания — *թվամոլություն*
 артериосклероз — *անոթների կարծրացում*
 артериосклеротический — *արտերիոսկլերոտիկական*
 артралгия — *հողացավ*
 артрит — *հողատապ*

- arthritis deformans — տձև, այլանդակող հողա-
տապ, հողախախտութիւն
артритический — հողատապային
артрогенный — հողածին
артропатический — հողախտային
артропатия — հողախտ, հողախտավորութիւն
— табетическая — տաբետային հողախտ
asomnia, асомния — անքնութիւն
ассоциационный — կապակցական, զուգորդական
ассоциационные волокна — կապակցական, զու-
գորդական թելքեր (միացնում են նույն
կիսագնդի կեղևի զանազան մասերը)
ассоциация — կապակցութիւն
аспермия — անսերմութիւն
астазия — անկանգնութիւն, աստազիա
астеник — ասթենիկ
астенический — ասթենիկական
астения — ասթենիա, անուժութիւն,
астереогнозия — անիրիմացութիւն, աստերեոզ-
նոզիա
астереогностический — անիրիմացողական,
асфиксия — շնչահեղձութիւն
атавизм — ատավիզմ, առհավութիւն
атавистические признаки — ատավիստիկական,
առհավական, նախնիներից ժառանգած նշան-
ներ

- атаксия — անկայունութիւն, ատակսիա
ataxia locomotoria progressiva — շարժիչ առա-
ջընթաց անկայունութիւն
атактический — անկայուն, ատակտիկական
атетоз — աթետոզ
атлет — ըմբիշ, ատլետ
атлетический — ըմբշական, ատլետիկական
атония — անլարվածութիւն, ապալարում
атрофический паралич — ապաճման պարալիզ
атрофия — ապաճում, լետաճում
— мышцы — մկանի ապաճում
— нерва — ներվի ապաճում
autohemoterapia, аутогемотерапия — ինքնարե-
նարութիւն
аутоинтоксикация — ինքնաթունավորում
autosuggestio — ինքնաներշնչում
аура, аура — աուրա, հովիկ, երան
афазия — անխոսութիւն, աֆազիա
афазия амнестическая — անհուշային անխոսու-
թիւն
афазия двигательная — շարժիչ անխոսութիւն
афазия сенсорная — զգայական անխոսութիւն
афония — անձայնութիւն
афразия — անասացութիւն, աֆրազիա
аффект — հուզումն, զրզիւ
— паталогический — հիվանդազին հուզում
— физиологический — բնախոսական հուզում

аффективный — հուղարկ
 ахроматизм — անդունդութիւն, ախրոմատիզմ
 ахроматический — անգույն, ախրոմատիկական
 ацефалия — անգլխութիւն, ացեֆալիա
 аеротерапия — ոդարութեան թրջութիւն

Б В

База — հիմք, խարիտի
 Базедова болезнь — Բազեդովյան հիվանդութիւն
 базильярный менингит — ուղեղի հիմքի պատե-
 նատապ
 базисный — հիմքային, հիմքի
 базофобия — գետնավախութիւն, բազոֆորիա,
 քայլավախութիւն
 безумие — խելագարութիւն, խելազրկութիւն
 бесплодное мудрствование — անպտուղ իմաս-
 տակութիւն, սոփեստութիւն
 бессилие половое — սեռական թուլութիւն
 бессоница — անքնութիւն
 билатеральный — յերկկողմանի
 битемпоральный — յերկքունքային
 — ая гемианопсия — յերկքունքային կիսան-
 տեսութիւն
 blutdrüsen — արյան գեղձեր, տ. эндокринные
 железы
 боковой — կողմնական
 — склероз — տ. sclerosis lateralis

болевая чувствительность — ջերմութեան զգա-
 ցում, ջերմազգացութիւն
 болезнь Литля — Լիտլյան հիվանդութիւն
 — Гейне-Медина (Heine-Medin) — Հեյնե-Մե-
 դինյան հիվանդութիւն
 — Гелла (Gull'i) — Գելլյան հ., տ. микседема
 борозда — ալոս
 брадикинезия — դանդաղաշարժութիւն
 брадилалия — դանդաղախոտութիւն, տ. бради-
 фазия
 брадилексия — դանդաղընթեքցում
 брадифагия — դանդաղակերութիւն
 брадифазия — դանդաղախոտութիւն
 брадифрения — դանդաղամտութիւն
 брахиалгия — բազկացավ
 бред — դառանցանք
 бредовой — դառանցական
 бромизм — բրոմիզմ, թունավորում բրոմով
 Брун-Секаровский паралич — Բրոուն-Սեկար-
 յան պարալիզ
 бугорок — բլրակ
 буйность — կատաղութիւն, մոլեգնութիւն
 буйный — կատաղի, մոլեգին
 буйствовать — դառնալ կատաղի, մոլեգնել
 bulimia, булимия — գերքաղցածութիւն
 бульбарный — կոճղեղային
 — паралич — կոճղեղային պարալիզ
 bulbus, бульбус — կոճղեղ
 buphtalmia — տ. exophthalmus

B V

- Ваготония — վագոտոնիա
 вазомоторный — անոթաշարժ
 вазоплегия — անոթազարակիղ
 Валлейевские точки — վալլեյան կետեր (ներ-
 վաճյուղերի վորոշ կետերում ճնշումից ա-
 ռաջացած ցավեր)
 вегетативная нервная система — վեգետատիվ
 ներվային համակարգութուն
 вегетоневроз — վեգետանեվրոզ, վեգետատիվ ն.,
 հ. նեվրոզ
 vertigo, вертиго — գլխապտույտ
 вестибулярный — անդաստակային
 вибрационная чувствительность — վիբրացիոն,
 թրթուման զգացում
 вибр-ый массаж — վիբրացիոն մասաժ
 вид — տեսք, տ. habitus
 висцеральная нервная система — ընդերային
 ներվային համակարգութուն
 висцеральный — ընդերային
 — рефлекс — ընդերային ակֆլեկս
 Виттова пляска — Վիտտյան հիվանդութուն,
 տ. хорей
 влажный — թաց, տամուկ, խոնավ
 влажные обертывания — թաց փաթաթումներ
 вмменяемость — մեղսագիտակութուն
 вмменяемый — մեղսագիտակ

- внушать — ներշնչել
 внушаемость — ներշնչելիութուն
 внушение — ներշնչում
 вогнутая поверхность — գոգավոր մակերես
 водобоязнь — ջրվախութուն, տ. hydrophobia
 водолечение — ջրարուժանութուն
 возбудимость — դուրագրգռութուն
 возбудитель — գրգռիչ, հարուցիչ
 возбуждать — գրգռել
 возбуждение — գրգիռ, գրգռմունք, հուզմունք
 воздержание — ժուժկալութուն
 — половое — սեռական ժուժկալութուն
 воздушный — ոդային
 — ая ванна — ոդային վաննա
 — ая контузия — ոդային ցնցում
 волевой — կամային
 — ые движения — կամային շարժումներ
 волнение — հուզում, վրդովմունք
 волокно — թելք (բ-տ. չ.)
 — мышечное — մկանային թելք
 — нервное — ներվային թելք
 воспаление — բորբոքում, ապա, բորբ
 — головного мозга — գլխուղեղատապ
 — костного мозга — ծուժատապ
 — спинного мозга — վողնուղեղատապ
 восприимчивость — ըմբռնելու ունակութուն
 восприятие — ընկալում

նկարանական տերմիններ—



восходящий — վերընթաց

— ее волокно — վերընթաց թելք

— пути — վերընթաց ուղիներ

— ий паралич Ляндри — վերընթաց Լյանդրյան պարալիզ

впечатлительность — զգացնություն

впечатлительный — զգայուն, տպավորվող

вращательный — պտուտական

— ые движения — պտուտական շարժումներ

— нистагм — պտուտական ակնախաղ

вскрытие трупа — դիակառնություն, հերձում

выносливость — տոկունություն, դիմացկունություն

выносливый — տոկուն, դիմացկուն

выпуклая поверхность — կորնթանող մակերես

выступ — յերուն, յերուստ, յերունդ (բ-տ. Հ.)

вязкий — մածան, ճապաղ, ճահճային

вязкость — մածանություն, ճապաղություն

вялость — թուլություն, ջլատություն, թարշամածություն

вялый — թուլ, ջլատ, թարշամած

— ая мышца — թուլ, թարշամած մկան

— паралич — թարշամած պարալիզ

Г Н

Habitus — հարիտուս, համերևույթ, հիվանդի ընդհանուր տեսքը, տ. ВИД

haemotoma — արյունոտուցք, արյունոտուց

— cerebri — ուղեղի արյունոտուցք

haematomyelia — հեմատոմիելիա, արյունազեղում վողնուղեղի նյութի մեջ

haematotorachis — հեմատոթորախիս, պսայռաների արյունազեղում

галлюцинация — հալուցինացիա, ցնորք, բանդազուշանք, յերևակայություն, զգայախաբույթյուն

галлюцинировать — բանդազուշել, յերևակայել, ցնորախարվել

гальванизация — գալվանացում

гальванизировать — գալվանացնել

гальванический — գալվանական

— ток — գալվանական հոսանք, տոկ

ганглия, ganglion — հանգուլց, գանգլիոն

— основания мозга — ուղեղի հիմքի հանգուլց

гастральгия — ստամոքսացավ

гелиотерапия — արևաբուժություն

гемианестезия — միկողմանի անզգայություն

гемианопсия — կիսանտեսություն

hemianopsia binocularis — յերկաչյա կիսանտեսություն

— homonyma — յերկաչյա համանուն կիսանտեսություն

hemianopsia bitemporalis — յերկբունքային կիսանտեսություն

- гемиатетоз — միկոդանի աթետոզ
 hemiatrophia facialis progressiva — դեմքի միկոդանի առաջընթաց պարալիզ
 hemicrania — ա. мигрень
 hemimyoelonus — հեմիմիոկլոնոս, մկանների միկոդանի կծկություն
 hemioria — ա. hemianopsia
 гемипарез — միկոդանի պարեզ, կիսապարեզ, հեմիպարեզ
 гемиплегия — միկոդանի պարալիզ, կիսապարալիզ, հեմիպլեգիա
 hemispasmus, гемиспазм — կիսակծկանք, հեմիսպազմ
 генетика — ծագումնաբանություն, գենետիկա
 генетический — ծագումնաբանական, գենետիկ
 генуинная эпилепсия — ինքնածին, գենուինեպիլեպսիա
 генуинный — ինքնածին, գենուին
 hereditarius — ժառանգական
 гередитарная форма нервных заболеваний — ներվոզին հիվանդությունների ժառանգական ձևը
 herpes zoster — գոտկաձև հերպես
 — ophthalmicus — աչքի գոտկաձև հերպես
 гетерогенный — ալլապարբ
 gewonenheitslähmung — սովորույթի պարալիզ
 гигантизм — հսկայակազմություն, գիգանտիզմ
 гидромиелия, hydromyelia — հիդրոմիելիա, ջրահավաքում ուղեղի մեջ
 гидротерапия — ջրաբուժություն

- гидрофобические судороги — ջրավախություն, ջրավախային շղաձկություններ
 гидрофобия — ա. водобоязнь
 гидроцефал — ուղեղի ջրգողություն, ջրակալություն
 гидроцефалический — ուղեղաջրգողական
 hydrocephalus acquisitus — ուղեղի ձեռքբերովի ջրգողություն
 — chronicus — ուղեղի խրոնիկ ջրգողություն, ջրակալություն
 — congenitus — ուղեղի բնածին ջրգողություն
 — internus — ուղեղի ներսի ջրգողություն
 гипалгезия — թերացավություն, թերացավոտություն
 гипералгезия — գերցավություն, գերցավոտություն
 гиперемия — արնեշատություն, գերարյունություն, արնեկալում, հիպերեմիա
 — мозга — ուղեղի գերարյունություն
 гиперестезия — գերզգայություն
 hyperhydrosis — գերքրտնություն
 — paradoxa — պարադոկսային գերքրտնություն (լերբ հիվանդը վոշ միայն տաքություն չի զգում, այլև մրսում է սիրինգոմիելիայի ժամանակ)
 гиперкератозис — գերեղջերացում

- гиперкинезия — գերշարժունություն, գերշարժողականություն
- гиперметрия — հիպերմետրիա (շարժումների անկանոնություն՝ սահմանազանցման իմաստով. լինում է ուղեղիկային հիվանդությունների ժամանակ)
- гипермнезия — գերհուշուրություն, գերհիշողություն
- гиперплазия — գերաճում
- гиперсекреция — գերհյութարտադրություն
- hypersomnia — գերքնկոտություն
- гипертермия — գերջերմություն
- гипертиреозидизм — հիպերթիրեոզիզմ
- hypertrichosis, гипертрихоз — գերմազոտություն, գերմազեղություն
- гипертрофия — գերաճում
- гипертония — գերլարվածություն
- гипалгезия — թերցավություն
- гипестезия — թերզգայություն
- гипноз — հիպնոս
- гипнология — հիպնոսաբանություն
- гипнотерапия — հիպնոսաբուժություն
- гипнотизер — հիպնոսիչ, հիպնոսող
- гипнотизм — հիպնոսիզմ, արհեստականորեն առաջացող քնանման վիճակ
- гипнотизировать — հիպնոսել
- гипнотика, hypnotica — քնաբեր միջոցներ
- гипнотический — հիպնոսային
- гиподинамия — թերզորություն

- гипокинезия — թերշարժունություն
- гипокринизм — ներզատուցքային գեղձի թերզորունեություն
- гипомания — թերմոլիզնություն
- гипомнезия — թերհուշուրություն, թերհիշողություն
- гипосмия — թերհոտառություն
- гипостения — թերուժություն
- гипотаксия — թերանկայունություն
- гипотерместезия — ջերմության թերզգայություն
- гипотермия — հովացում, սառեցում
- гипотонический — թերլարվածային
- гипотония — թերլարվածություն
- hypophysis, гипофиз — ուղեղի լենթաճոն (բ-ա. Հ.)
- гипофизарная дистрофия — լենթաճոնային տարաճում
- гипофобия — անվախություն
- гипофункция — թերզորունեություն
- гипохондрик — հիպոխոնդրիկ, ախոնդանոս, մաղձոս
- гипохондрия — հիպոխոնդրիա, ախոնդանոսություն, մաղձոտություն
- gyrus — վորրք, գալար
- hysteralgia — ներվային արգանդացավ
- гистологический — հյուսվածաբանական
- гистология — հյուսվածաբանություն
- гистопатологический — հյուսվածա - ախտաբանական

- гистопатология — հյուսվածա ախտաբանութիւն
- глия — տ. невроглия
- глиома — գլիոմա, գլիայից (նեյրոգլիայից) առաջացած ուռուցք
- globus hystericus — «հիստերիայի գունդ» (հիստերիայի ախտանշան է. զգացվում է կարծես թե կոկորդում գնդանման իր է մնացել)
- глоссалгия — լեզվացավ, լեզվի նեվրացավ
- глоссоплегия — լեզվի պարալիզ
- глоссоспазм — լեզվակարկամութիւն
- глухонемой — խուլ ու համր, խուլուամուկ
- глухонемота — խուլհամրութիւն
- гнозия — իմացութիւն
- гнойник — թարախակույտ
- головная боль — գլխացավ
- головная водянка — տ. hydrocephalus
- головной мозг — գլխուղեղ, գլխի ուղեղ
- головкружение — գլխապտույտ
- гомогенный — միատարր
- гормон — հորմոն, ներզատուց գեղձերի արտադրանք
- grande hysterie — մեծ հիստերիա
- hystero-epilepsia — հիստերո-էպիլեպսիա
- графоман — գրամոլ
- графомания — գրամոլութիւն
- графоспазм — գրեկակարկամութիւն

- губа тапира — գետակինձի շրթունք (մկանների առաջնակի ապաճման ախտանշաններից է)
- гумма мозга — ուղեղի գումա
- гумма сифилитическая — սիֆիլիտային գումա
- гунтеровский язык — Հունտերյան լեզու (յերբ լեզուն բոլորովին հարթացած է լինում)
- гусяная кожа — սագի մաշկ

Д

- Давление — ճնշում, սեղմում
- кровяное — արյան ճնշում
- на мозг — ճնշում ուղեղի վրա
- на нерв — ներվի սեղմում
- дактиломегалия — ծայրանդամների մատների գերաճում, մատնամեծութիւն (ակրոմեգալիայի ժամանակ)
- двигательная область — շարժիչ վոլորտ
- способность — շարժունակութիւն
- двигательный нерв — շարժիչ ներվ
- двусторонний — յերկկողմանի
- паралич — յերկ. պարալիզ
- двоение — յերկվութիւն, կրկնապատկերում
- дегенеративная атрофия — վերասերման ապաճում
- degeneratio adiposogenitalis — ճարպասեռական վերասերում
- дегенерация — վերասերում
- дееспособность — գործունակութիւն
- дееспособный — գործունակ

- decapitatio, декапитация — գլխատում
 decubitus — պռակելախոց
 действие — գործողութիւն
 — совместное — գործակցութիւն
 delirium — դառանցանք, տ. бред
 демаркационная линия — սահմանատական գիծ
 (գանգրենայի ժամանակ)
 demarcatio — սահմանատում (բ-տ. չ.)
 деменция — անմտութիւն
 демономан — դիվահար
 демономания — դիվահարութիւն
 депрессивный — ընկճված, դեպրեսիվ
 depressio депрессия — ընկճվածութիւն, դեպ-
 րեսիա
 derencephalocoele — գլխուղեղի ճողվածք
 дерматит — մաշկատապ
 дерматоневроз — մաշկանեվրոզ
 детская тетания — մանկական տետանիա
 дефект — թերութիւն, պակասութիւն, ախտ-
 ծութիւն
 дефективный — թերատ, պակասավոր, ախտ-
 деформация — ձեւախախտում, տձեւութիւն, աչ-
 րանդակում
 Джексоновская эпилепсия — Զեկսոնյան եպի-
 лепսիա
 диабет — շաքարախտ
 диагноз — ախտորոշում
 диагностика — ախտորոշութիւն

- диагностический — ախտորոշական
 диагностировать — ախտորոշել
 дизартрия — տարարտասանութիւն, արտասա-
 նութիւն խանգարում
 дизестезия — տարզգայութիւն
 динамика — դինամիկա, շարժականութիւն
 динамометр — ուժաչափ
 диплегия — յերկկողմանի պարալիզ
 диплопия — տ. двоение
 дипсомания — պարբերական հարբեցողութիւն
 dysbasia angiosclerotica — տ. периодическая
 хромота
 дисгенетические признаки — տարածողական հատ-
 կանիշներ, տ. նշաններ
 дискоординация — տարակարգութիւն
 дислалия — տարախոսութիւն, դժվարախոսու-
 թիւն
 дислексия — դժվար ընթերցանութիւն
 дислогия — դժվարախոսութիւն
 диссоциация — տարաբաժանում
 диссоциированное расстройство чувстви-
 тельности — զգայական տարաբաժանում
 дистальный — հեռավոր, հեռական
 дистанцептор — հեռընդունիչ
 dystrophia adiposo-genitalis — տ. degeneratio
 adiposo-genitalis
 — musculorum progressiva — մկանների պրոգ-
 րեսիվ տարածում (գլխտրոֆիա)

- *typus facio scapulo-humeralis* — դիմաթիակա-ուսային ձև
- *typus juvenilis* — պատանեկան ձև
- дистрофический — տարածման, տարածողական
- дистрофия — տարածում
- дифтеритический парализ — դիֆտերիական պարալիզ
- долихоцефал — չերկարագլուխ
- долихоцефалия — չերկարագլխություն
- дорсализация — դորսալիզացիա, կրծքայնացում (գործ ե անվում վոդների նկատմամբ)
- дорсальный — չեռակ
- дрожание — դողդողում, դողում, դողդողում
- интенционное — լարվածական, լարման դողդողում
- Паркинсоновское — Պարկինսոնյան դողում
- старческое — ծերունական դողում
- дрожательный паралич — դողաբեր (դողդողուն) պարալիզ
- дуновение — սոսափյուն
- dura mater* — կարծր, պինդ պատյան, խստենի
- душевная болезнь — հոգեկան հիվանդություն
- душевно-больной — հոգեկան հիվանդ
- душевный — հոգեկան

Ж

Железа — գեղձ

- инкреторная — ներզատուց գեղձ
- экскреторная — արտազատուց գ.

- жестикаляция — շարժատակություն
- жестокий — դաժան, խիստ, անզուխ
- жестокосердие — խստասրտություն, անողորմություն
- жестокость — դաժանություն, խստություն
- жизнедеятельность — կենսագործունեյություն
- организма — որգանիզմի կենսագործունեյություն
- ткани — հյուսվածքի կենսագործունեյություն
- жизнедеятельный — կենսագործունեյա, ակտիվ
- жизненная потребность, сила — կենսական կարիք, ուժ
- жизнеспособность — կենսունակություն
- жизнеспособный — կենսունակ

З

- Заблуждение — մոլորություն
- задержание мочи — միզարգելություն, միզախափանում
- задержка движения — շարժումների հապաղում
- мочи — ա. задержание мочи
- зайка — կակազ
- заикание — կակազություն
- заикаться — կակազել
- запальчивость — դյուրագրգռություն, ցասկոտություն
- запальчивый — դյուրագրգիռ, ցասկոտ
- запой — պարբերական հարբեցողություն, ա. дипсомания

запойное пьянство — *տ.* запой
 запойный бред — հարբեցողութեան գառանցանք
 застойный сосок — ակնապտուկի արյունահանք
 зачатие — սղմնավորում
 заячья губа — նապաստակի շրթունք, շրթնատ
 звукопроводящий аппарат — հնչունահաղորդ
 ապարատ (գործիք), ձայնատար
 зоб — խպիպ
 зобная железа — ուրցագեղձ
 зона — գոտի
 зоопсия, zoopsia — կենդանավախութուն, կեն-
 դանափախութուն, կենդանիներից խու-
 սափելը, զոոպսիա

И У

Ydée fixe — սեեռուն միտք, գաղափար
 идентичный — համանման
 идиомускулярный — մկանահատուկ
 идиопатическая мышечная атрофия — մկաննե-
 րի ինքնաձին, ինքնակիր ապաճում
 идиосинкразия — իդիոսինկրազիա, լուրահատուկ
 հակազդեցութուն
 извилина — գալար, վոլորք, *տ.* gyrus
 извилина мозговая — ուղեղի վոլորք
 извращение — խեղաթյուրում, աղավաղում
 — мыслей — մտքերի աղավաղում
 излишество половое — սեռական անժուժկալու-
 թյուն, *տ.* excessus

ИЗОЛЯЦИЯ — մեկուսացում
 ИЗОСТЕНИЯ — հավասարազորութուն, իզոստենիա
 [մկանների (հանգիստ ժամանակ) հավա-
 սարաչափ ներվալորում]
 ИЛЛЮЗИЯ — պատրանք, իլյուզիա
 ИММУНИЗАЦИЯ — վարակամերժում
 ИММУНИЗИРУЮЩИЙ — վարակամերժ
 ИММУНИТЕТ — վարակամերժութուն, անվարակե-
 լիութուն
 ИМПОТЕНТ — սեռականապես անկար, իմպոտենտ
 ИМПОТЕНЦИЯ — սեռական թուլութուն, անկարու-
 թյուն
 — coeundi — սեռական մերձեցման անկարու-
 թյուն
 impressiones digitatae — մատնապուճեք
 импульс — խթան
 inanitio — հյուժվածութուն
 инвалид — հաշմ, հաշմանդամ, ինվալիդ, անկար
 инвалидность — հաշմութուն, հաշմանդամու-
 թյուն, անկարութուն
 ИНВОЛЮЦИОННЫЙ — հետափոխական
 ИНВОЛЮЦИЯ — հետափոխութուն, ինվոլյուցիա,
 որդանիզմի թառամման, շիջման շրջան
 ИНКООРДИНАЦИЯ — ապակարգութուն
 — движений — շարժումների ապակարգութուն
 incontinentia urinae — անմիզապահութուն
 — intermittens — պարբերական անմիզապա-
 հութուն

- инкрет — ներդատուցք
 инкреторная железа — ներդատուցքային գեղձ
 инкубационный период — խմորման շրջան
 инкубация — խմորում (հիվանդության գաղտնի
 դարձացման շրջան)
 иннервация — ներվավորում
 иннервировать — ներվավորել
 иннервирующий — ներվավորող
 инсоляция — *м.* солнечный удар
 insomnia — անքնություն, *м.* бессоница
 инсульт — կաթված, հարված
 интенсивный — ինտենսիվ, լարված
 интендионное дрожание — ինտենցիոն (լարման)
 դողողում
 интендионный — ինտենցիոն, լարման
 интервертебральные ганглии — միջողջային հան-
 գուցներ
 интеркостальная невралгия — միջկողային նեվ-
 րացավ, *м.* межреберная невралгия
 интерстициальная ткань — շարակցական հյուս-
 վածք
 интерстициальный — շարակցական
 интоксикационный — թունավոր
 интоксикация — թունավորում
 интракраниальный — ներգանգային
 инфантилизм — մանկայնություն
 инфантильный — մանկային, յերախայական
 инфильтрация — ներսփռում

- infundibulum — ճագար
 ипохондрия — ախոնդանոտություն, մաղձոտու-
 թյուն
 иррадиация — ճառագայթում
 иррадиировать — ճառագայթել
 иррадиирующий — ճառագայթող
 искалечить — խեղել, հաշմանդամ դարձնել
 истерический — հիստերիական
 — кифоз — *м.* камптокормия
 искусственный — արհեստական
 истерия — հիստերիա
 истеро-травматические расстройства — հիստե-
 րա-տրավմատիկական խանգարումներ
 истеро-эпилепсия — հիստերա-եպիլեպսիա
 истечение семени — սերմնահոսություն
 — раннее — վաղաժամ սերմնահոսություն
 истощение — ուժասպառություն, հյուժում
 — нервное — ներվերի, ներվային հյուժում
 — старческое — ծերունական ուժասպառու-
 թյուն, ծ. հյուժում
 исход — լելք, վախճան
 — болезни — հիվանդության վախճան
 ишалгия — նստաներվացավ
 ишиас, ischias — նստաներվատապ, իշիաս
 ischophonia — *м.* заикание
 ischuria, ишурия — անմիզություն

К С

- Cavum cranii — գանգախորշ
 камптокормия — վոլանաշարի կորուսթյուն
 caput — գլուխ
 кардионевроз — սրտի նեվրոզ
 кариес — վոսկրափտուսթյուն
 — позвонков — վողնոսկրափտուսթյուն
 кастрация, castratio — ձվատուժ, ներքինացում
 катаlepsia — կատալեպսիա, փայտացում
 катаплексия — մկանի զգայազրկուսթյուն, կատապլեքսիա
 катод — կատոդ
 causalgia, каузалгия — այրող ցավեր
 кахексия — հյուսվածուսթյուն
 cachexia strumipriva — Խ. микседема
 cachexie pachidermique (Шарко) — Խ. микседема
 кератоз — չեղջերացում, Խ. ороговение
 кефалодиния — գլխացավ, Խ. цефалалгия
 кинетическая энергия — շարժիչ էներգիա
 киста мозговая — ուղեղաբուշտ
 кифоз — վոլանաշարի կորուսթյուն, կիֆոզ
 кифо-сколиоз — կիֆոսկոլիոզ, վոլանաշարի կողմնաձուլում
 claudicatio intermittens — պարբերական կազուսթյուն, Խ. периодическая хромота
 claustrophobia, клаустрофобия — կլավստրոֆոբիա, փակավախուսթյուն, վախ փակ տեղից

- клептоман — գողանամուղ
 клептомания — գողանամուղուսթյուն
 клептофобия — գողավախուսթյուն
 климах, климактерий — դաշտանադադար
 клонический — լրբցական, կլոնիկական
 клонус — լրբցք, կլոնուս
 клонус стопы — ներբանի կլոնուս, ն. լրբցք
 — чашечки — ծնկոսկրի կլոնուս, ծ. լրբցք
 коксалгия — ազդրացավ
 коксит — ազդրատապ
 коксодиния — Խ. коксалгия
 колика — ծակոց, խիթ
 коллапс — նվազանք, կոլլապս
 кома — քնուսթյուն, կոմա
 командная истерия — հրամանատարական հիստերիա
 коматозное состояние — քնեած, քնուկ վիճակ
 комбинаторная способность — զուգակցական, համակցական ընդունակուսթյուն
 комбинация — զուգակցուսթյուն, համակցուսթյուն
 комиссуральный — կցանալին, միացման
 к—ые волокна — կցանալին, միացման թեղքեր (միացնում են ուղեղի կլաստանդերի զանազան վոլորաները) Խ. ассоциационные волокна
 commotio cerebri — ուղեղացնցում
 коммоционный невроз — ցնցման, ցնցումալին նեվրոզ

- компенсация — *կոմպենսացիա, փոխհատուցում*
compressio cerebri — ուղեղի ճնշում
 конвергенция — *համամետում (բ-տ. Հ.)*
 конвульсия — *Չղաձգություն, կարկամություն*
congestio cerebri — տ. прилив крови к голове
 консистенция — *սերտություն, խտության առ-
 տիճան*
 конституциональный — *բնակազմական*
 конституция организма — *որգանիզմի հորինվածք,
 որգանիզմի կառուցվածք, բնակազմու-
 թյուն*
 консультация — *կոնսուլտացիա, խորհրդակցու-
 թյուն*
 консультант — *կոնսուլտանտ, խորհրդատու*
 контактцептор — *հուպընդունիչ, կոնտակտցեպտոր*
 контрактура — *կծկություն, կծկանք, ձգանք,
 կոնտրակտուրա*
 контуженный — *կոնտուզիա ստացած, սալջարդ-
 ված*
*contusio cerebri — ուղեղի ճմլվածք, փլասվածք,
 կոնտուզիա*
 контузия — *ճմլվածք, ճարդվածք, սալջարդ*
 — *вибрационная — թրթուման, վիբրացիոն
 սալջարդ, ցնցում*
 — *воздушная — ոդային ցնցում, ոդ. սալ-
 շարդ*
 конфабуляция — *թյուրհուշություն, կոնֆարու-
 լացիա*

- концентрация — *համակենտրոնացում*
 концентрировать — *համակենտրոնացնել*
 координация — *համակարգում*
 — *движений — շարժումների համակարգում*
 копрофагия — *աղբակերություն, կղկղակերու-
 թյուն*
corpus callosum — բրդամարմին (բ-տ. Հ.)
 корешки нервные — *ներվարմատներ*
 Корсаковский психоз — *Կորսակովյան պսիխոզ*
 косноязычие — *թլվատություն*
 косоглазие — *շլակնություն*
 костыльный паралич — *հենակի, անթացուպի
 պարալիզ (ներվի ճնշումից առաջացած)*
 crampus — *տ. судорога*
 краниальный — *գանգային*
 краниометр — *գանգաչափիկ*
 краниометрия — *գանգաչափություն*
 красные ядра — *կարմիր կորիզներ*
 крестцовое сплетение — *պավակային հանգույց*
 кретин — *ապուշ*
 кретинизм — *ապշություն*
 кривошея — *տ. torticollis*
 криз — *կրիզ, մոլուցք, բռնկում*
 — *гортани — կոկորդային կրիզ, մոլուցք*
 — *желудочные — ստամոքսային կ.*
 — *кишечные — աղիքային կ.*
 — *мочевые — միզափամփուշտային կ.*
 — *табетические — տաբետային կ.*

- крипторхизм — գաղտնաձվություն, գաղտնամորձություն (ամորձիները չեն իջնում փոշտի մեջ)
- кровоизлияние — արյունահեղում
- кровонаполнение — արնակալում, արյունահեղություն
- кровотечение — արյունահոսություն, արնահոսում
- кровеные железы — տ. эндокринные железы
- quo ad vitam (prognosis) — կյանքի նկատմամբ
- sanationem — ապաքինման նկատմամբ
- valetudinem completam — կատարյալ առողջացման նկատմամբ
- культя — ծայրատ, կուլտյա
- cus anserina — «սագի մաշկ», սագամաշկություն (նկատվում է սիմպաթիկոտոնիալի ժամանակ)

Л Л

- Лабиринт — բավիղ, լաբիրինթոս (բ.տ. Հ.)
- лабиринтит — բավիղատապ, լաբիրինթոսի բորբոքում
- labium leporinum — տ. заячьа губа
- lagophthalmus — լագոֆտալմոս, «նապաստակի աչք», նապաստակակնություն (կոպերի միացումը համարյա թե անկարելի յե դառնում)
- паралитический — պարալիզային է. (դեմաներվի պարալիզ)
- спастический — կարկամային, սպաստիկ է. (կոպի մկանի կարկամություն, սպազմ)

- laesio cerebri — ուղեղի վնասվածք
- лалация — թոթովում (կակազության ժամանակ)
- лалопатия — դժվարախոսություն
- лалофобия — խոսելավախություն
- Landry паралич — Լանդրյան պարալիզ
- ланцинирующие боли — տ. стреляющие боли
- ларингоспазм — խոչակի կարկամություն
- латеризироваться — կողմնավորվել, մի կողմում արտահայտվել (գործ է անվում կամերտոնի հնչյունի վերաբերյալ ականջի հիվանդության ժամանակ)
- латеризация — կողմնավորում, լատերիզացիա
- латиризм — լաթիրիզմ՝ վոդնուղեղի հիվանդություն, վորն առաջանում է lathyrus sativus, l. cicerա բույսի թունավորումից
- lemniscus lateralis — հարթակ (բ.տ. Հ.)
- лептоменингит — փափկապատենատապ, փափուկ պատյանի բորբոքում, նրբենատապ
- leptomeningx — փափուկ պատյան, նրբենի
- летаргический энцефалит — լեթարգիական ուղեղատապ
- libido, либидо — հեշտասիրություն, տենչ
- sexualis — սեռական տենչ, ս. մղում
- coeundi — սեռական մերձեցման տենչ
- лимфаденит — ավշագեղձատապ
- лимфангоит — ավշանոթատապ

- lyssa, лисса — կատաղություն, ջրվահսություն
 логанозия — անբանիմացություն, լոգագնոզ
 գիտ, խոսվածքը կամ գրածը չհասկանալ
 логоклония — լոգոկլոնիա, բառակարկամություն,
 բառի վերջին վանկի ջղաձգական կրկնում
 (կակազության ժամանակ)
 логомания — լոգոմանիա, խոսարկամություն,
 խոսելացավ, շաղկիրատություն
 логопатия — լոգոպաթիա, դժվարախոսություն
 локализация — տեղակայում, տեղայնացում, տե-
 ղափակում
 локализованный — տեղափակված, տեղայ-
 նացված
 локализовать — տեղափակել, տեղակայել
 локомоторный — տեղաշարժիչ
 локсофтальмус — տ. косоглазие
 ломбартия — գոտկողնի հողացավ, մեջքացավ
 лордоз — լորդոզ, վոդնաշարի կորացումը գեպի
 առաջ
 лунатизм — լուսնոտություն
 лунатик — լուսնոտ
 люмбаго — գոտկատեղացավ, մեջքացավ
 люмбартрия — գոտկատեղի հողացում
 люмбодиния — տ. люмбаго
 люмбодорсальный — գոտկատեղա-մեջքային
 люмбоишалгия — մեջքացավ, գոտկա-նստաներ-
 վացավ
 лябильный — անկայուն

M

- Main en griffe — «ճիրանաձև ձեռք» (մկանների
 վոդնուղեղային պրոգրեսիվ ապաճման ժա-
 մանակ)
 main succulente — «հյութալի ձեռք», գիրք ձեռք
 macromelia, макромелия — մակրոմելիա, ծայ-
 րանդամների մեծացում
 макросомия — հսկայականություն
 макроцефал — մեծագլուխ
 макроцефалия — մեծագլխություն
 maladie de Morvan — Մորվանյան հիվանդու-
 թյուն, տ. սիրինգոմիելիա
 mal perforant du pied — վոտը ծակող, ճեղքող խոց
 malum perforans pedis — տ. mal perforant
 mania, мания — մոլեգնություն, մոլություն, մո-
 լուցք
 маниакальный — մոլեգին, մոլի
 маразм — գառամախտ, մարազմ, հյուժում
 массаж — մասաժ, մերսում
 — вибрационный — թրթռուն մասաժ
 — электрический — էլեկտրական մասաժ
 мастодиния — ծծանեվրացավ
 мастурбация — ձեռնաշարժություն, տ. онанизм
 medulla — ուղեղ, ծուծ
 — oblongata — յերկայնաձիգ, յերկայնած
 (բ-տ. Հ.) ուղեղ
 — osseum — վոսկրածուծ
 — spinalis — վոդնուղեղ

- medullaris — վողնուղեղային
 межоболочечный — միջպատենային, միջթաղանթային
 межпозвоночные ганглии — միջողնային հանգույց
 межреберная невралгия — միջկողային նեվրալգիա, ա. интеркостальная невралгия
 межреберный — միջկողային
 межреберье — կողամեջ
 meningialis — պատենային, թաղանթային
 менингизм — պատենատապուլթյուն, մենինգիզմ
 менигиома — պատենուռուցք
 менингит — պատենատապ, թաղանթի բորբոքում, մենինգիտ
 — ГОЛОВНОГО МОЗГА — գլխուղեղի պատենատապ
 — СПИННОГО МОЗГА — վողնուղեղի պատենատապ
 менингический — ա. meningialis
 менингокиста — պատենաբուշտ
 менингокок — մենինգոկոկ
 менингоковая сыворотка — մենինգոկոկային շիճուկ
 meningomalatio, менингомалация — պատենափափկացում, թաղանթի փափկացում
 менинго-миэлит — վողնուղեղապատենատապ
 менинго-миэло-энцефалит — պատյանի, վողնուղեղի և գլխուղեղի բորբոքում

- менингоррагия — մենինգորագիա, արյունահոսություն պատյանի մեջ
 менингоцеле — պատենացցում, թաղանթացցում, մենինինգոցելե, պատյանի ցցվելը
 meninx — ա. оболочка
 Меньера болезнь — Մենիերյան հիվանդություն
 neuralgia paraesthetica — թյուրզգայական աղբյուրացավ
 месмеризм — մեսմերիզմ, հիվանդությունների բուժում Մեսմերի առաջարկած ձևով («կենդանական մագնետիզմ»)
 метаболизм — մետաբոլիզմ, նյութերի փոխանակություն
 метаболический — մետաբոլիկ,
 метаболия — մետաբոլիա, ա. մետաբոլիզմ
 метамерный — հատվածական
 миалгия — մկանացավ
 mialgia abdominalis — վորովայնի մկանացավ
 — cervicalis — պարանոցի մկանացավ
 — dorsalis — մեջքի մկանացավ
 микрогирия — միկրոգիրիա, մախրոլորություն
 миит — ա. миозит
 миелосклероз — վողնուղեղի կարծրացում, միելոսկլերոզ
 миелоцеле, myelocele — միելոցելե, վողնուղեղի ցցվելը

- микромелия — միկրոմելիա, ծայրանդամների
փոքրութիւն
- микросомия — թզուկութիւն
- микрорефал — փոքրագլուխ
- микрорефалия — փոքրագլխութիւն
- микседема — միկսեդեմա, լորձայտուց
- мимика — դիմախոսութիւն, միմիկա
- миимическая жестикуляция — դիմախոսական շար-
